**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

15-ը հոկտեմբերի 2018թ.
ժամը $11^{00}$

**Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 08.10.2018թ., ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 10.10.2018թ., ժամը 10:00-ին: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:**

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի սպա, մայոր Գ. Հովսեփյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Միքայելյան,

**Քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության ՆՏՄ գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔԾՀ 3-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

Հանձնաժողովն արձանագրեց աճուրդի արդյունքների ամփոփման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարություններն ուսումնասիրելուց հետո:

**19.10.2018թ., ժամը 11:30**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Վարդանյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Վարդանյան)

1.1 Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ ՀՀ ՊՆ կարիքների համար «**ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՄԱՍԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, ԹՈՒՂԹ ՕՖՍԵԹ**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «ՎԱՐԲԱԴ» ՍՊԸ |
| 2. | «Նորմա-պլյուս» ՍՊԸ |
| 3 | Ա/Ձ Դավիթ Քոչարյան |
| 4 | «Պրոֆիլյան Էդ Էմ» ՍՊԸ |
| 5 | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի,«Պրոֆիլյան Էդ Էմ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Դավիթ Քոչարյանի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** առկա են:

2.2 «Պրոֆիլայն էռ էմ» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունները** համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Ա/Ձ Դավիթ Քոչարյանի կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունը** չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես դրանում նշված չէ Դավիթ Քոչարյանի՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսանալու կարգավիճակը, այսինքն՝ նշված չէր Ա/Ձ, Ֆ/Ա, ՍՊԸ, ՀՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ և այլն լինելը, իսկ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը հաստատված չէր էլեկտրոնային ստորագրությամբ /բացառությամբ լիազորագրի/:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ա/Ձ Դավիթ Քոչարյանին և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին, մինչև կասեցման ժամկետի ավարտը, շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից պահանջվող շտկումը ներկայացնելուց հետո:

**23.10.2018թ., ժամը 11:00**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները և քննարկելով Eauction համակարգի միջոցով Ա/Ձ Դավիթ Քոչարյանի և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի -ին1 հավելվածով նախատեսված դիմում-հայտարարությունների շտկված տարբերակները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դրանք գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

**Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի տեխնիկական խափանման հետևանքով հանձնաժողովի անդամների մոտ մինչև 26.10.2018թ. չէր առաջանում համակարգի ներսում փաստաթղթի գնահատման առաջադրանքը, ուստի գնահատման արդյունքների արձանագրումը կատարվել է տեխնիկական խնդրի կարգավորումից հետո:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

---

(Գ. Վարդանյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների **նախնական** և **վերջնական** գնային առաջարկները. **Տես Հավելված N 1:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Գ. Վարդանյան)

4.1 Հիմք ընդունելով **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված **նախնական** և **վերջնական** գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունների** գնահատման արդյունքները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ Ա/Ձ Դավիթ Քոչարյանը:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

Գ. Վարդանյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Հովսեփյան |
| Գնահատող | Ս. Պետրոսյան |
| Գնահատող | Գ. Հովսեփյան |
| Գնահատող | Ա. Միքայելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Գ. Վարդանյան |